ՔՄՖ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Քոուչինգի միջազգային ֆեդերացիայի (ՔՄՖ) ամփոփված են հինգ հիմնական բաժիններում և մեկ հավելվածում.

1. ՆՊԱՏԱԿԸ
2. ՔՄՖ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
3. ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՄՖ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՈԼՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ
4. ԷԹԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ՔՄՖ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ
5. ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՐԴՈՒՄ

ՀԱՎԵԼՎԱԾ

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

ԱՅԼ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՑԱՆԿ

1. ՆՊԱՏԱԿԸ

Քոուչինգի միջազգային ֆեդերացիան (ՔՄՖ) քոուչինգի առաջատար ասոցիացիան է աշխարհում:

ՔՄՖ-ի կազմում ընդգրկված է վեց ընտանիք-կազմակերպություն (ԸԿ), որոնք միասին ձևավորում են ՔՄՖ էկոհամակարգը: ԸԿ-ներն են՝ «ICF Professional Coaches» (ՔՄՖ պրոֆեսիոնալ քոուչեր), «ICF Credentials and Standards» (ՔՄՖ որակավորումներ և չափանիշներ), «ICF Coaching Education» (ՔՄՖ քոուչինգային կրթություն), «ICF Foundation» (ՔՄՖ հիմնադրամ), «ICF Coaching in Organizations» (ՔՄՖ քոուչինգը կազմակերպություններում) և «ICF Thought Leadership Institute» (ՔՄՖ առաջադեմ գաղափարների ինստիտուտ): ՔՄՖ համաշխարհային խորհուրդը տրամադրում է ամբողջ ՔՄՖ էկոհամակարգի ռազմավարական ուղղությունը և իրականացնում է էկոհամակարգի համակարգումը:

Ելնելով իր առաքելությունից և պատասխանատվությունից՝ ՔՄՖ-ն ներկայացնում է էթիկայի կանոններ, որոնք սահմանում են մասնագիտական գործունեության էթիկական չափանիշները, և որոնց պահպանումը պարտադիր է ՔՄՖ էկոհամակարգի բոլոր ներկայացուցիչների համար՝ լինեն նրանք ՔՄՖ մասնագետներ (տե՛ս սահմանումը), թե այլ պաշտոններ զբաղեցնող անձինք: ՔՄՖ Էթիկայի կանոններով ղեկավարվում են հետևյալ դերերն ու պատասխանատվությունները՝ ՔՄՖ մասնագետներ, ՔՄՖ աշխատակազմ (տե՛ս

սահմանումը), կամավորներ, ՔՄՖ խորհրդի անդամներ, ՔՄՖ գործող մասնագետների համայնքների ղեկավարներ, ՔՄՖ համաշխարհային հանձնաժողովների անդամներ, նպատակային աշխատանքային խմբեր և հիմնական թիմեր (որոնց կազմում կարող են լինել ինչպես ՔՄՖ մասնագետներ, այնպես էլ ոչ ՔՄՖ մասնագետներ):

ՔՄՖ Էթիկայի կանոններն արտացոլում են Քոուչինգի միջազգային ֆեդերացիայի առանցքային արժեքները (ՔՄՖ առանցքային արժեքներ, որոնք հիմք են հանդիսանում ՔՄՖ Էթիկայի կանոնների ընկալման համար), էթիկական սկզբունքները և վարվեցողության էթիկական չափանիշները:

ՔՄՖ Էթիկայի կանոնները նպաստում են Քոուչինգի միջազգային ֆեդերացիայի և քոուչինգի մասնագիտության միասնականության ապահովմանը՝

- սահմանելով ՔՄՖ առանցքային արժեքներին և էթիկական սկզբունքներին համապատասխան վարվեցողության չափանիշներ,
- ՔՄՖ էթիկայի կանոնների խախտումների ուսումնասիրման գործընթացում օգնելով վճիռների կայացմանը և պահպանելով ՔՄՖ էթիկական չափանիշները,
- հիմք ստեղծելով ՔՄՖ-ի կողմից հավատարմագրված ծրագրերում ՔՄՖ Էթիկայի կանոնների ուսուցման համար:

Սույն էթիկայի կանոնները նախատեսված են օգնելու էթիկայի կանոններին ենթակա անձանց՝ ուղղորդելով նրանց էթիկական գործոնների, արժեքների և սկզբունքների հարցում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել, երբ էթիկային առնչվող հիմնավորում են կատարում կամ որոշումներ են կայացնում:

ՔՄՖ Էթիկայի կանոնները կիրառվում են, երբ մասնագիտական փոխգործակցության ժամանակ մարդիկ ներկայանում են որպես ՔՄՖ էկոհամակարգի ներկայացուցիչներ և (կամ) ՔՄՖ մասնագետներ:

Էթիկայի տեսանկյունից գրագետ աշխատելու մարտահրավերը ենթադրում է, որ ՔՄՖ էկոհամակարգում ընդգրկված անձինք անխուսափելիորեն բախվելու են անկանխատեսելի հարցերի պատասխաններ, դժվար կացության հաղթահարում կամ խնդիրների լուծումներ պահանջող իրավիճակների:

ՔՄՖ էկոհամակարգում ընդգրկված անձինք ձգտում են էթիկապես գրագետ գործել նույնիսկ այն իրավիճակում, երբ պահանջվում է խիզախ գործելակերպ և դժվար որոշումների կայացում՝ հավատարիմ մնալով «ԱՆԵԼ ԼԱՎ» սկզբունքին, երբ հարցը վերաբերում է իրենց շահակիցներին:

Էթիկայի կանոնների 4-րդ մասում հստակ սահմանվում են քոուչի, քոուչ-սուպերվիզորի, մենթոր-քոուչի, ուսուցանողի կամ վերապատրաստում անցնող ուսանող քոուչի տարբեր դերերն ստանձնած ՔՄՖ մասնագետների էթիկական պարտավորությունները:

ՔՄՖ Անկախ վերանայման խորհուրդը էթիկայի կանոնների խախտումների ուսումնասիրման գործընթացի միջոցով ապահովում է սույն էթիկայի կանոնների պահպանումը: Գործընթացը կիրառելի է ՔՄՖ բոլոր մասնագետների համար:

ՔՄՖ-ն պարտավորեցնում է, որ որակավորում ստացած բոլոր ՔՄՖ մասնագետներն անցեն էթիկայի կանոնների շարունակական կրթություն և ուսուցում: Բացի այդ, ՔՄՖ-ի կողմից հավատարմագրված քոուչինգի կրթական ծրագրերը պարտադիր կերպով պետք է ապահովեն էթիկայի կանոնների ուսուցումը, քանի որ ՔՄՖ-ն համարում է, որ էթիկան քոուչինգ մասնագիտության հիմնարար տարրն է:

ՔՄՖ էթիկայի կանոնները կիրառվում են ՔՄՖ էկոհամակարգի մաս կազմող բոլոր անհատների կամ կազմակերպությունների նկատմամբ, և նրանցից ոչ ոք չի կարող հրաժարվել էթիկայի կանոնների որևէ բաժնից կամ մասից, ինչպես նաև նրանց չի թույլատրվում ջնջել, փոփոխել կամ լրացնել էթիկայի կանոնների ոչ մի դրույթ:

ՔՄՖ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Էթիկայի կանոնները ներկայացնում են առանցքային արժեքների ու էթիկական սկզբունքների կիրառման ուղեցույցներ և դրանց գործնականում կիրառության ձևերը: Բոլոր արժեքներն ու սկզբունքները հավասարապես կարևոր են, փոխլրացնում են միմյանց, և դրանց պետք է ձգտել: ՔՄՖ էկոհամակարգի բոլոր անդամները մասնագիտական տարբեր փոխգործակցությունների ժամանակ պարտավոր են հարգել առանցքային արժեքները և գործել սկզբունքներին համահունչ:

Առանցքային արժեքներն ու առնչվող էթիկական սկզբունքները ներկայացված են ՔՄՖ-ի կայքում և ստորև (տե՛ս https://coachingfederation.org/app/uploads/2022/01/ICF-Core-Values.pdf):

Պրոֆեսիոնալիզմ. քոուչինգային մտածելակերպի դրսևորման և մասնագիտական որակի ապահովման հանձնառություն, որը ներառում է պատասխանատվությունը, հարգանքը, բարեվարքությունը, կոմպետենտությունն ու գերազանցության ձգտումը:

Ես դրսևորում եմ պրոֆեսիանլիզմ՝

- մասնագիտական իմ բոլոր փոխգործակցություններում ապահովելով իմ մասնագիտական գործունեության համահունչությունը մարդկային արժեքներին և քոուչինգային մտածելակերպի կարողունակությանը,
- լինելով ճիշտ իմ բոլոր արտահայտություններում,
- ստանձնելով ցկյանս մասնագիտական կրթման և անձնային աճի հանձնառություն,
- աջակցելով իմ հաճախորդներին, ուսանողներին և ՔՄՖ մասնագետներին նրանց անձնային աճի ու մասնագիտական զարգացման շարունակական գործընթացում,
- կատարելով իմ պարտավորությունները,
- իրազեկ լինելով էթիկական տեսանկյունից վիճահարույց հարցերին ու խնդիրներին և արձագանքելով ՔՄՖ Էթիկայի կանոններին համապատասխան,
- նպաստելով գիտելիքի շտեմարանի հարստացմանը և փոխանակվելով փորձով ու հմտություններով, ինչպես նկարագրված է ՔՄՖ Առանցքային կարողունակություններում,
- մարտահրավերների բախվելիս լինելով ճկուն և վստահ,

- քոուչինգին առնչվող բոլոր գործնական հարցերում դրսևորելով հարգալից և թափանցիկ մոտեցում,
- քոուչինգին առնչվող իմ մասնագիտական փոխգործակցություններում կատարելով հստակ և ճշգրիտ հայտարարություններ,
- ցուցաբերել ազնվություն, քաջություն, կատարել համաձայնեցված գործողություններ, դրսևորել էթիկական գործելակերպ և հավատարիմ մնալ ՔՄՖ-ի ու քոուչինգի մասնագիտության բարձրագույն չափանիշներին:

Համագործակցություն. սոցիալական շփման և համայնքի ձևավորման հանձնառություն:

Ես աշխատում եմ համագործակցային մոտեցմամբ՝

- ստանձնելով պարտավորություններ և նպաստելով պրոֆեսիոնալ քոուչինգի զարգացման առաջընթացին՝ համատեղ ստեղծարարությունն ու ռեսուրսներով ապահովումը խթանելու միջոցով,
- գործակցելով տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչների հետ,
- բոլոր կոլեկտիվ նախաձեռնություններում ունենալով գիտակցված և նպատակային մասնակցություն,
- համագործակցելով հաճախորդ(ներ)ի և հովանավոր(ներ)ի հետ աշխատող ՔՄՖ այլ մասնագետների հետ,
- գործակցելով և հաղորդակցվելով հարակից մասնագիտությունների ներկայացուցիչների, ասոցիացիաների և քոուչինգային այլ կազմակերպություններում ու գործունեությունում ներգրավված անձանց հետ:

Մարդկայնություն. այլոց նկատմամբ մարդկային, բարի, ապրումակցող և հարգալից վերաբերմունք ցուցաբերելու հանձնառություն:

Ես դրսևորում եմ մարդկայնություն՝

- ընդունելով, որ որպես մարդ էակ՝ ես կատարյալ չեմ, և անկատարությունը քոուչինգային մտածելակերպով արտահայտելը ինձ համար անկեղծ լինելու մշակույթը տարածելու և ինքնընդունման հնարավորություն է,
- իմանալով, որ ես մշտապես ավելի շատ սովորելու բան ունեմ և կարևորում եմ այլ տեսակետներ,
- հաստատելով ազնվություն, թափանցիկություն և հստակություն պարունակող անկեղծ հարաբերություններ,
- շարունակաբար ձգտելով և զարգացնելով ինքնագիտակցումը,
- պատրաստակամ լինելով գիտակցելու և ընդունելու իմ սխալները,
- ստանձնելով իմ գործողությունների և դրանցից դասեր քաղելու պատասխանատվությունը,
- դրսևորելով համեստություն իմ ձեռքբերումների առումով,
- խուսափելով ցանկացած ձևով գերակայություն պարունակող վարքագծից կամ հաղորդակցումից,
- ցուցաբերելով անկողմնակալություն, արժանապատվություն, ինքնագնահատում և հարգանք մարդու իրավունքների հանդեպ:

Հավասարություն. այլոց կարիքները քոուչինգային մտածելակերպով բացահայտելու և հասկանալու հանձնառություն, որպեսզի մշտապես կարողանամ բոլորի համար հավասարություն ապահովող անաչառ գործընթացներ կիրառել:

Ես պահպանում եմ անկողմնակալություն՝

- ընդունելով և հարգելով տարբեր ինքնություններ ունեցող բոլոր խմբերին և նրանց ներդրումները,
- արժանապատվության և արդարության նույն զգացումով վերաբերվելով բոլորին,
- իմ և ուրիշների մեջ ընկալելով գիտակցված և չգիտակցված կողմնակալության պարբերական օրինաչափությունները,
- հետազոտելով սոցիալական բազմազանությունը, համակարգային հավասարությունը և համակարգային ճնշումը և դրանց դրսևորումները քոուչինգային մասնագիտության մեջ, որպեսզի հասկանամ և իրազեկեմ դրանց մասին,
- ապահովելով հավասարություն և փոխգործակցային մոտեցում քոուչ-հաճախորդ, վերապատրաստող-ուսանող, մենթոր-քոուչ և սուպերվիզոր-քոուչ իմ բոլոր հարաբերություններում:

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՄՖ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՈԼՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արժեքները ոգեշնչող և հիմնարար ուղեցույց են էթիկական մտածողության և որոշումների կայացման համար: ՔՄՖ էկոհամակարգի բոլոր ներկայացուցիչները պարտավոր են իրենց մասնագիտական գործունեության շրջանակում հարգել և պահպանել այս արժեքները:

Մենք՝

- կատարում ենք մեր պարտականությունները գիտակցորեն՝ դրսևորելով բարեվարքություն և հաշվետվողականություն, ունենալով գլոբալ մտածելակերպ, լինելով համարձակ մեր մտքերում, գործողություններում և խոսքում, գիտակցելով մեր գործած ազդեցությունը և կրելով բոլոր հետևանքների պատասխանատվությունը,
- ձգտում ենք գերազանցության՝ անդադար ինքնակրթվելու, մասնագիտական կարողությունները կատարելագործելու և էթիկական պահվածք զարգացնելու միջոցով,
- զգոն ենք մշակութային զտիչների նկատմամբ և հարգանք ենք դրսևորում մեր մշակույթից տարբերվող մշակույթների հանդեպ՝ վարելով բաց զրույցներ միջմշակութային ու բազմամշակութային տարբերությունների թեմաներով,
- մշտապես իրազեկված ենք հարաբերությունների և դրանց վրա ազդող գործոնների, այդ թվում՝ կողմնակալությունների, ուժերի բաշխման և համակարգային ճնշման ձևերի մասին և շարունակական կրթության ու բաց քննարկումների միջոցով ակտիվորեն հասցեավորում ենք այդ գործոնները,
- շարունակական ինքնավերլուծության և ինքնագիտակցման բարձրացման միջոցով աշխատում ենք մեր էթիկական վարվեցողության զարգացման և հասունության հասնելու ուղղությամբ: Էթիկային առնչվող վիճահարույց հարց առաջանալու դեպքում խնդիրը լուծելու համար, ըստ անհրաժեշտության, կդիմենք աջակցության,

- եթե տեղեկանում ենք ուրիշների ոչ էթիկական վարքագծի մասին, փորձում ենք հարգալից կերպով հայտնել նրանց մեր մտահոգությունները և անհրաժեշտության դեպքում փորձում ենք ստանալ էթիկական հարցերի վերաբերյալ ուղղորդում՝ հետագա քայլերը որոշելու համար,
- խոսում ենք նրանց հետ, ովքեր պետք է տեղեկացված լինեն Էթիկայի սույն կանոններով սահմանված էթիկական պարտավորությունների մասին՝ տրամադրելով նրանց հասանելիություն Էթիկայի կանոններին,
- ընդունում ենք, որ էթիկական վարվեցողություն նշանակում է անել ավելին, քան այն, ինչ գրված է Էթիկայի սույն կանոններում:

ԷԹԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ՔՄՖ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՔՄՖ էթիկական չափանիշների պահպանումը ՔՄՖ-ի սահմանած քոուչինգի առանցքային կարողունակություններից առաջինն է. «Ցուցադրել էթիկական մոտեցում՝ հասկանալ և հետևողականորեն կիրառել քոուչինգի էթիկայի կանոնները և չափանիշները»:

Ստորև ներկայացվող էթիկական չափանիշները կիրառվում են ՔՄՖ մասնագետների մասնագիտական գործունեության համար՝ անկախ ֆորմալ քոուչինգային հարաբերության (տե՛ս սահմանումները) առկայությունից: Էթիկական սույն չափանիշները ներկայացված են հինգ առանձին բաժիններում.

1. Հաճախորդի և (կամ) հովանավորի ներգրավման համաձայնություններ
2. Գաղտնիություն և իրավական պահանջների կատարում
3. Մասնագիտական էթիկա և շահերի բախում
4. Համաձայնեցված արժեքի ապահովման հանձնառություն
5. Մասնագիտական բարեվարքություն և հաշվետվողականություն:

Բաժին 1.
Հաճախորդի և (կամ) հովանավորի ներգրավման համաձայնություններ

Որպես ՔՄՖ մասնագետ ես՝

1.1. Հաղորդակցվում եմ (նախքան քոուչինգն սկսելը) հաճախորդ(ներ)ի, հովանավոր(ներ)ի և (կամ) ներգրավված այլ կողմերի հետ, որոնց հետ քոուչն ուղղակի հարաբերության մեջ է, որպեսզի բացատրեմ քոուչինգի բնույթը և նրանց հետ համատեղ հաստատեմ քոուչինգային համաձայնություն դերերի, պատասխանատվությունների, գաղտնիության, ֆինանսական պայմանավորվածությունների և քոուչինգային գործընթացում ներգրավվածության այլ հարցերի շուրջ:

1.2. Հարգում եմ քոուչինգային գործընթացում քոուչինգային հարաբերությունը ցանկացած պահի որևէ պատճառով դադարեցնելու բոլոր կողմերի իրավունքները, որը պետք է համապատասխանի պայմանագրի դրույթներով սահմանված կարգին:

Բաժին 2.
Գաղտնիություն և իրավական պահանջների կատարում

Որպես ՔՄՖ մասնագետ ես՝

2.1. Ապահովում եմ գաղտնիության խստագույն մակարդակ ներգրավված բոլոր կողմերի համար՝ անկախ իմ կատարած դերից:

2.2. Ունեմ հաստակ համաձայնություն քոուչինգային գործընթացում ներգրավված բոլոր կողմերի միջև փոխանակվող տեղեկությունների և փոխանակման եղանակների մասին:

2.3. Ունեմ հաստակ համաձայնություն հաճախորդ(ներ)ի, հովանավոր(ներ)ի և (կամ) ներգրավված այլ կողմերի հետ այն մասին, թե որ գաղտնի տեղեկությունները կարող է անհրաժեշտ լինել բացահայտել համապատասխան մարմիններին (օրինակ՝ օրենքով պահանջվող դեպքերում կամ դատարանի գործող կարգադրությամբ կամ ծանուցմամբ հաստատված ապօրինի գործունեություն, սեփական անձին կամ այլոց սպառնացող անմիջական/հավանական վտանգ):

2.4. Բոլոր գրառումները, այդ թվում՝ էլեկտրոնային ֆայլերը և հաղորդակցությունները պահպանում, պահում և ոչնչացնում եմ այն եղանակով, որն ապահովում է գաղտնիություն, անվտանգություն և անձնական տվյալների պաշտպանություն, ինչպես նաև համապատասխանում է կիրառելի օրենքների և պայմանագրերի պահանջներին:

2.5. Քոուչինգի իմ հաճախորդ(ներ)ի, հովանավոր(ներ)ի, կոլեգաների և ընդհանուր առմամբ հանրության հանդեպ ստանձնած էթիկական ու իրավական իմ պարտականությունները կատարում եմ ուղղակիորեն և այն տեխնոլոգիական համակարգերի միջոցով, որոնք կարող եմ օգտագործել (օրինակ՝ տեխնոլոգիական օժանդակությամբ քոուչինգային գործիքներ, տվյալների շտեմարաններ, հարթակներ, ծրագրակազմեր և արհեստական բանականություն):

2.6. Պատասխանատու եմ իմ աջակցող անձնակազմի կողմից Էթիկայի կանոնների համապատասխան չափանիշների պահպանման համար:

2.7. Պահպանում եմ ՔՄՖ մասնագետների տվյալների գաղտնիությունը և նրանց կոնտակտային տվյալները (էլփոստի հասցեներ, հեռախոսահամարներ և այլն) օգտագործում եմ միայն ՔՄՖ-ի կողմից սահմանված կարգով և ՔՄՖ անդամների թույլտվությամբ:

2.8. Պահպանում եմ հեղինակային իրավունքի օրենքները, ընդունում և հարգում եմ ուրիշների ներդրումը և մտավոր սեփականությունը՝ սեփականության իրավունքի պահանջ ներկայացնելով միայն իմ սեփական նյութերի համար:

Բաժին 3.
Մասնագիտական էթիկա և շահերի բախում

Որպես ՔՄՖ մասնագետ ես՝

3.1. Տեղյակ եմ և ներգրավված բոլոր կողմերի հետ քննարկում եմ տարբեր համաձայնություններ ու հարաբերություններ ունենալու հետևանքները և այն, որ շահերի բախման հավանականություն կարող է լինել:

3.2. Ինքնանդրադարձ վերլուծության, քոուչինգային համաձայնություն(ներ)ի և շարունակական երկխոսության միջոցով կառավարում եմ քոուչինգի հաճախորդ(ներ)ի, հովանավոր(ներ)ի հետ գոյություն ունեցող կամ հավանական շահերի բախումները:

3.3. Լուծում եմ գոյություն ունեցող կամ հավանական շահերի բախման բոլոր դեպքերը՝ խնդրի վրա աշխատելով համապատասխան կողմերի հետ, ստանալով մասնագիտական աջակցություն կամ ընդհատելով կամ դադարեցնելով մասնագիտական հարաբերությունը:

3.4. Պատասխանատու եմ մասնագիտական, ֆիզիկական կամ այլ բնույթի փոխգործողությունների կառավարման հստակ, համապատասխան և մշակութային բազմազանությունը հաշվի առնող շրջանակներն իմանալու և սահմանելու համար:

3.5. Ձգտում եմ արդարության՝ լինելով տեղեկացված իմ կողմնակալությունների մասին և հաղթահարելով դրանք այնպես, որ ուրիշների նկատմամբ ռասայի, մաշկի գույնի, գենդերային ինքնության, սեռական կողմնորոշման, սոցիալ-տնտեսական կարգավիճակի, տարիքի, հոգևոր գործունեության, ունակությունների և մարդկային տարբերությունների այլ խմբերի, դասերի ու կատեգորիաների հիման վրա խտրականություն չդնեմ:

3.6. Գիտակցում եմ քոուչինգային հարաբերությանը բնորոշ մտերմության աստիճանը: Հաճախորդ(ներ)ի կամ հովանավոր(ներ)ի հետ չեմ հաստատում սիրային կամ սեռական որևէ հարաբերություն: Հարաբերության որևէ փոփոխություն նկատելու դեպքում համապատասխան գործողություններ կձեռնարկեմ խնդրի լուծման կամ քոուչինգային հարաբերության չեղարկման ուղղությամբ:

3.7. Հասկանում եմ, որ ՔՄՖ մասնագետները, ելնելով իրենց նախկին կրթությունից և (կամ) փորձից, հաճախ հանդես են գալիս են տարբեր մասնագիտական դերերում (օր.՝ մենթոր, հոգեթերապևտ, ՄՌԿ մասնագետ, գնահատող), և իմ պատասխանատվությունն է ներկայացնել հաճախորդին, երբ ՔՄՖ մասնագետ լինելուց բացի ես հանդես գամ այլ դերում:

3.8. Իմ հաճախորդ(ների)ն տեղեկացնում եմ, որ վճարվել/այլ օգուտներ եմ ստացել կամ ապագայում կվճարվեմ/այլ օգուտներ կստանամ նրանց երրորդ կողմերի մոտ ուղղորդելու համար:

Բաժին 4.
Համաձայնեցված արժեքի ապահովման հանձնառություն

Որպես ՔՄՖ մասնագետ ես՝

4.1. Տեղյակ եմ իմ և իմ հաճախորդի միջև մշակութային, փոխհարաբերությունների, հոգեբանական կամ համատեքստային հիմնախնդիրներից բխող դիրքային կամ կարգավիճակային ցանկացած տարբերության և գործակցելով իմ հաճախորդի հետ՝ ակտիվորեն կառավարում եմ դրանք:

4.2. Ճանաչում եմ իմ անձնական սահմանները կամ այն հանգամանքները, որոնք կարող են խանգարել իմ քոուչինգային գործունեությանը կամ մասնագիտական հանձնառություններին: Անհրաժեշտության դեպքում կդիմեմ աջակցության և կձգտեմ ստանալ համապատասխան մասնագիտական ուղղորդում: Դա գուցե հանգեցնի քոուչինգային հարաբերության (հարաբերությունների) ընդհատման կամ դադարեցման:

4.3. Զգոն եմ այն ամենի նկատմամբ, ինչը մատնանշում է, որ գուցե քոուչինգային հարաբերության արդյունքում ձեռք բերված արժեքի փոփոխություն կա և քննարկում եմ դա հաճախորդի հետ: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրում եմ քոուչինգային հարաբերության մեջ փոփոխություններ կատարելու հանգամանքը և (կամ) մեկ այլ քոուչ, մեկ այլ մասնագետ փնտրելու կամ այլ ռեսուրս օգտագործելու հավանականությունը:

Բաժին 5.
Մասնագիտական բարեվարքություն և հաշվետվողականություն

Որպես ՔՄՖ մասնագետ ես՝

5.1. Ճշգրտորեն եմ ներկայացնում որպես քոուչ իմ որակավորումները և աշխատում եմ իմ քոուչինգային կարողությունների մակարդակի, փորձագիտական հմտությունների, ձեռք բերած փորձի, վերապատրաստումների, հավաստագրերի և ՔՄՖ որակավորումների շրջանակում:

5.2. Գրավոր և բանավոր կերպով ներկայացնում եմ ճշգրիտ և հավաստի տեղեկություններ որպես ՔՄՖ մասնագետ իմ և ՔՄՖ կողմից առաջարկվող ծառայությունների, քոուչինգի՝ որպես մասնագիտության և դրա ապահոված պոտենցիալ արժեքի վերաբերյալ:

5.3. Հետևում եմ «անել լավ», այլ ոչ «խուսափել վատից» փիլիսոփայությանը՝ գիտակցելով իմ մասնագիտական գործունեության ազդեցությունը հաճախորդներիս, շահակից-ների, քոուչինգի մասնագիտության և հասարակության վրա:

Ես հասկանում եմ, որ ՔՄՖ-ն կարող է իր հայեցողությամբ և Էթիկայի կանոնների խախտումների ուսումնասիրման գործընթացի շրջանակում պատասխանատվու-թյուն պահանջել ինձնից ՔՄՖ Էթիկայի կանոնների խախտման համար: Ես նաև համաձայն եմ, որ ՔՄՖ-ի կողմից ինձ պատասխանատվության ենթարկելը կարող է ներառել պատժամիջոցներ խախտման համար, օրինակ՝ քոուչինգային լրացուցիչ

կրթության, մենթորինգի, սուպերվիզիայի պարտադիր ստացում կամ ՔՄՖ անդամության դադարեցում և (կամ) ՔՄՖ որակազրկում:

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՐԴՈՒՄ

Ստանձնելով ցանկացած դեր ՔՄՖ էկոհամակարգում՝ ես խոստանում եմ կատարել իմ էթիկական պարտավորությունները և իմ բոլոր մասնագիտական փոխգործողություններում հավատարիմ մնալ ՔՄՖ Էթիկայի կանոններին: Ես պարտավորվում եմ ներդնել առավելագույն ջանքեր՝ քոուչինգ մասնագիտությունը և ՔՄՖ-ն արժանապատիվ կերպով ներկայացնելու և մասնագիտական հեղինակությունը բարձր պահելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ.
ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

- **«Արհեստական բանականություն»** – ցանկացած ալգորիթմ կամ մեքենական տեխնոլոգիա, որը համակարգիչներին և այլ էլեկտրոնային սարքերին թույլ է տալիս նմանակել մարդու բանականությունը և խնդրի լուծման հմտությունները (տե՛ս Չափանիշ 2.5)
- «**Հաճախորդ» –** քոուչինգ անցնող անձ, թիմ կամ խումբ, մենթորինգի, սուպերվիզիայի կամ դասընթացի մասնակից կամ ուսումնառող քոուչ (տե՛ս Չափանիշներ 1.1, 2.3, 2.5, 3.2, 3.6, 3.7, 3.8, 4.1, 4.3)
- «**Քոուչինգ» –** համագործակցություն հաճախորդների հետ՝ ոգեշնչելու նրանց մտածական և ստեղծագործական գործընթացի միջոցով հասկանալ և առավելագույնի հասցնել անձնային ու մասնագիտական ներուժը (տե՛ս Մաս 4)
- **«Քոուչինգային համաձայնագիր»** – ՔՄՖ մասնագետի և հաճախորդ(ներ)ի/հովանավոր(ներ)ի միջև կնքվող ֆորմալ փաստաթուղթ, որը սահմանում է նրանց միջև քոուչինգային հարաբերությանն առնչվող հասկացությունները, ակնկալիքները և պայմանները: Այն սովորաբար ներառում է քոուչինգի նպատակները, հանդիպումների հաճախականությունը, գաղտնիության քաղաքականությունները, վճարման պայմանները, չեղարկման կանոնները և քոուչի ու հաճախորդի պատասխանատվությունները (տե՛ս Չափանիշներ 1.1, 1.2, 2.2, 2.3, 3.1, 3.2)
- «**Քոուչինգային ներգրավվածություն**» – կառուցվածքային փոխգործակցություն ՔՄՖ մասնագետի և հաճախորդ(ներ)ի/հովանավոր(ներ)ի միջև, որն ընդգրկում է քոուչինգի ամբողջ գործընթացը՝ ներառյալ նախնական գնահատումը, նպատակների սահմանումը, քոուչինգի կանոնավոր հանդիպումները, հետևումը առաջընթացին և արդյունքների գնահատումը (տե՛ս Չափանիշներ 1.1, 2.2, 3.6)
- «**Քոուչինգային հարաբերություն»** – հարաբերություն ՔՄՖ մասնագետի և հաճախորդ(ներ)ի/հովանավոր(ներ)ի միջև, որը հաստատվում է յուրաքանչյուր կողմի պատասխանատվությունը և ակնկալիքները սահմանող համաձայնագրով (տե՛ս Չափանիշներ 1.2, 3.1, 3.2, 3.3, 3.6, 4.2, 4.3)

- **«Քոուչ-սուպերվիզոր»** – փորձառու քոուչ, որը քոուչի (կամ քոուչերի խմբի) հետ մտնելով ռեֆլեկտիվ երկխոսության մեջ՝ համագործակցային գործընթացում նպաստում է նրա անձնային աճին, մասնագիտական կարողությունների և էթիկական վարվեցողության զարգացմանն ու ապահովում ուսուցում (տե՛ս Մասեր 1 և 2)
- **«Կանոններ»** – ՔՄՖ էթիկայի կանոններ՝ սույն փաստաթուղթը, որը ներառում է նպատակը, առանցքային արժեքները և էթիկական սկզբունքները, հանձնառությունները, հիմնական սահմանումները, բառացանկը և երդումը
- **«Գաղտնիություն»** – քոուչինգային հարաբերությունում ներգրավված լինելու արդյունքում կամ դրա վերաբերյալ ստացվող ցանկացած տեղեկության պաշտպանություն, եթե տվյալ տեղեկությունը բացահայտելու համար իրավական պատճառ կամ պահանջ, սպառնալիք կամ վնաս կամ հաճախորդի կողմից տրված գրավոր համաձայնություն չկա (տե՛ս Չափանիշներ 1.1, 2.1, 2.3, 2.4, 3.2)
- **«Շահերի բախում»** – իրավիճակ, որում ՔՄՖ մասնագետը գտնվում է տարբեր շահերի կիզակետում, երբ մի շահին սպասարկելը կարող է հակասել մյուսին կամ բախում առաջացնել մյուսի հետ: Նման շահեր կարող են լինել ֆինանսական, անձնային, ներքին, մասնագիտական շահը կամ ընկալված որևէ շահ հաճախորդի, հեռանկարային հաճախորդի կամ հովանավորի հետ (տե՛ս Չափանիշներ 3.1, 3.2, 3.3)
- **«Առանցքային կարողունակություններ»** – պրոֆեսիոնալ քոուչերի հատուկ հմտությունները (տե՛ս Մասեր 1 և 2)
- **«Հավասարություն»** – իրավիճակ, որում բոլոր մարդիկ, անկախ ռասայական, էթնիկական, ազգային պատկանելությունից, մաշկի գույնից, սեռից, սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից, տարիքից, կրոնից, ներգաղթյալի կարգավիճակից, հոգեկան կամ ֆիզիկական առանձնահատուկ կարիքներից և մարդկանց այլ տեսակի առանձնահատկություններից, ներառված են և օգտվում են ռեսուրսների ու հնարավորությունների հասանելիությունից (տե՛ս Մաս 2 և Չափանիշ 3.5)
- **«ՔՄՖ-ի կողմից հավաստագրված քոուչինգային կրթություն»** – կրթական հաստատության կողմից առաջարկվող ծրագիր, որը մանրակրկիտ կերպով վերանայվել է ՔՄՖ-ի կողմից, և որի ուսումնական պլանը համապատասխանում է ՔՄՖ-ի քոուչինգի սահմանմանը, ՔՄՖ առանցքային կարողունակություններին և ՔՄՖ Էթիկայի կանոններին (տե՛ս Մաս 1 և Չափանիշ 5.1)
- **«ՔՄՖ որակավորում»** – մասնագիտական հավաստագրում, որը ցույց է տալիս, որ անձը համապատասխանում է քոուչինգային հմտությունները զարգացնելու և կատարելագործելու համար նախատեսված հատուկ չափանիշներին ու պահանջներին: ՔՄՖ տրամադրում է հետևյալ որակավորումները՝ Associate Certified Coach (ACC), Professional Certified Coach (PCC) և Master Certified Coach (MCC) (տե՛ս Մաս 1 և Չափանիշ 5.1)
- **«ՔՄՖ էկոհամակարգ»** – ՔՄՖ-ի կազմում ընդգրկված է վեց ընտանիք-կազմակերպություն (ԸԿ), որոնք միասին ձևավորում են ՔՄՖ էկոհամակարգը: ԸԿ-ներն են՝ «ICF Professional Coaches» (ՔՄՖ պրոֆեսիոնալ քոուչեր), «ICF Credentials and Standards» (ՔՄՖ որակավորումներ և չափանիշներ), «ICF Coaching Education» (ՔՄՖ քոուչինգային կրթություն), «ICF Foundation» (ՔՄՖ հիմնադրամ), «ICF Coaching in Organizations»

(ՔՄՖ քոուչինգը կազմակերպություններում) և «ICF Thought Leadership Institute» (ՔՄՖ առաջադեմ գաղափարների ինստիտուտ) (տե՛ս Մաս 1)

- **«ՔՄՖ մասնագետ»** – անձինք, որոնք ներկայանալով որպես ՔՄՖ անդամ և (կամ) ՔՄՖ որակավորում ունեցող մասնագետ՝ հանդես են գալիս քոուչի, քոուչ-սուպերվիզորի, քոուչ-մենթորի, քոուչ-ուսուցանողի, խորհրդի անդամի, կամավորի կամ առաջնորդի դերերում՝ չսահմանափակվելով այդ դերերով (տե՛ս Մասեր 1, 2 և 4 և Չափանիշներ 2.7, 5.2)
- **«ՔՄՖ աշխատակազմ»** – ցանկացած անձ, որն աշխատանքի է ընդունվում կամ պայմանագրային հիմունքներով վարձվում է ՔՄՖ-ի կողմից կամ ցանկացած կառավարող ընկերություն, որը վարձվում է ՔՄՖ-ի կողմից՝ ՔՄՖ-ի համար կառավարման և վարչարարական ծառայություններ մատուցելու նպատակով (տե՛ս Մաս 1)
- **«Մտավոր սեփականություն»** – մտքի ստեղծագործական աշխատանքի արգասիքներ, որոնք օրինական ձևով ճանաչված են որպես դրանց հեղինակի կամ սեփականտիրոջ սեփականություն: Մտավոր սեփականության իրավունքները հեղինակին կամ սեփականտիրոջը շնորհում են իրենց ստեղծագործություններն օգտագործելու, ներկայացնելու և տարածելու բացառիկ իրավունքներ, որոնց անօրինական օգտագործումը կամ խախտումը պաշտպանվում է օրենքներով (տե՛ս Չափանիշ 2.6)
- **«Իրավական համապատասխանություն»** – համապատասխանություն այն երկրի օրենք(ներ)ի հետ, որում գործունեություն է ծավալում քոուչը (տե՛ս Մաս 4 և Չափանիշներ 2.2, 2.5)
- **«Քոուչ-մենթոր»** – փորձառու քոուչ, որը համագործակցային ուսուցողական գործընթացում (մենթորային քոուչինգ) դիտված և ձայնագրված քոուչինգային հանդիպման հիման վրա կարծիք է հայտնում մեկ այլ քոուչի մասին՝ վերջինիս քոուչինգի ուրույն ոճը և հմտությունները ՔՄՖ-ի առանցքային կարողունակությունների համապատասխանությամբ առավել կատարելագործելու նպատակով (տե՛ս Մասեր 1 և 2 և Չափանիշ 3.7)
- **«Հովանավոր»** – կազմակերպություն (ներառյալ նրա ներկայացուցիչները) կամ անձ՝ ներառյալ անչափահասների ծնողական պատասխանատվություն ստանձնած անձինք, որոնք վճարում և (կամ) կազմակերպում կամ սահմանում են մատուցվելիք քոուչինգային ծառայությունները (տե՛ս Մաս 2 և Չափանիշներ 1.1, 2.3, 2.5, 3.2, 3.6)
- **«Աջակցող անձնակազմ»** – մարդիկ, որոնք աշխատում են ՔՄՖ մասնագետների համար և հասանելիություն ունեն հաճախորդների և (կամ) քոուչերի մասին տեղեկություններին (օր.՝ ադմինիստրատիվ օգնականներ, մարկետինգ, հաշվապահություն և այլն) (տե՛ս Չափանիշ 2.6)
- **«Համակարգային հավասարություն»** – համայնքների, կազմակերպությունների, մասնագիտական ասոցիացիաների, ազգերի և հասարակության նորմերում, լեզվում, պատկերներում, համոզմունքներում, էթիկայի կանոններում, առանցքային արժեքներում, քաղաքականություններում, կառուցվածքներում, օրենքներում, գործելակերպերում և մշակույթում ամրագրված գենդերային, ռասայական կամ այլ տեսակի հավասարություն (տե՛ս Մաս 2 և Չափանիշ 3.5)

- **«Համակարգային ճնշում»** – համայնքների, կազմակերպությունների, մասնագիտական ասոցիացիաների, ազգերի և հասարակության նորմերում, համոզմունքներում, լեզվում, պատկերներում, էթիկայի կանոններում, առանցքային արժեքներում, քաղաքականություններում, կառուցվածքներում, օրենքներում, գործելակերպերում և մշակույթում ներդրված համակարգային խտրականություն ռասայի, մաշկի գույնի, սեռի հիման վրա կամ այլ տեսակի համակարգային անհավասարություն, որոնք նպաստում են մարգինալացված ինքնությամբ անձանց խտրական և վնասակար վերաբերմունքի լայնորեն տարածմանը և առավելություններ ու օգուտներ են ապահովում արտոնյալ ինքնությամբ անձանց համար (տե՛ս Մասեր 2 և 3):

ԱՅԼ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՑԱՆԿ

- **«Քոուչինգի հարթակ»** – քոուչինգի հարթակը, օգտագործելով թվային տեխնոլոգիա, լայնածավալ մակարդակում ապահովում է միասնական և սահուն քոուչինգային գործընթաց քոուչերի և հաճախորդների միջև:
- **«Քոուչինգի հարթակի պրովայդեր»** – քոուչինգի սեփական տեխնոլոգիական հարթակը ներկայացնող կազմակերպություն, որը հարթակի մշակումը կատարել է ինքնուրույն կամ այն պատվիրել է տեխնոլոգիական հարթակներ մշակողի:
- **«Քոուչինգի մատակարար»** – պրոֆեսիոնալ քոուչինգային ծառայություններ մատուցող շահույթի նպատակ հետապնդող կամ չհետապնդող կազմակերպություն, որը կարող է լինել կորպորացիա, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ), հասարակական կազմակերպություն կամ գործընկերություն՝ չսահմանափակվելով նշվածով:
- **«Քոուչինգի սուպերվիզիա»** – համագործակցության, ուղղորդման և աջակցության դինամիկ և ռեֆլեկտիվ գործընթաց, որը նպաստում է քոուչերի անձնային աճին, մասնագիտական կարողությունների կատարելագործմանը և էթիկական վարվեցողության ու հասունության զարգացմանը:
- **«ԲՀՆՊ» (DEIB)** – բազմազանություն, հավասարություն, ներառականություն, պատկանելություն՝ փոխկապակցված հիմնական հասկացություններ, որոնք արտահայտում են մի շարք նմանություններ ու տարբերություններ, հավասար հասանելիություն և վերաբերմունք, ընդունված լինելու, խմբի մասը կազմելու զգացողություն և արդարություն:
    - «Բազմազանություն» – ռասա, մաշկի գույն, կաստա, էթնիկական պատկանելություն, գենդերային ինքնություն, սեռական կողմնորոշում, կոչում, սոցիալ-տնտեսական կարգավիճակ, տարիք, հոգևոր գործունեություն, ազգային ծագում, ունակություններ և մարդկային տարբերությունների այլ խմբեր, դասեր ու կատեգորիաներ, օրինակ՝ անձնային հատկանիշները, տեսքը, հաղորդակցման ոճը և առաջնորդության ոճը:
    - «Հավասարություն» – գործողություններ, որոնք հասանելիություն են ապահովում ռեսուրսներին ու հնարավորություններին և նորմերը, գործողությունները, քաղաքականությունները, ենթակառուցվածքն ու մշակույթը սահմանում են այնպես, որ յուրաքանչյուրը կարողանա իրացնել իր ամբողջական ներուժը:

- «Ներառականություն» – գործողություն, որը ներառում և լիովին աջակցում է մարգինալացված ու արտոնյալ խմբերի մարդկանց՝ ստեղծելով ու պահպանելով այնպիսի գործընթացներ, ենթակառուցվածք և մշակույթ, որոնցով այս մարդիկ ասիմիլյացիայից ու տարբերակումից զատ ինտեգրվում են կազմակերպության կյանքում և աշխատանքում այնպես, որ մասնակցում են կազմակերպությունում աշխատանքի սահմանման և աշխատանքի կատարման ձևերին առնչվող որոշումների կայացմանը:
- «Պատկանելություն» – կազմակերպության հետ կապվածության և աշխատանքում ներգրավվածության մշտական զգացողություն կազմակերպության մարգինալացված և արտոնյալ անդամների մոտ, որի հիմքում նրանց այն փորձն է, որ իրենց ներկայությունը, ներդրումները և արժեքը իսկապես գնահատվում և ընդունվում են կազմակերպության կողմից, ինչը ցույց են տալիս կազմակերպության շարունակական գործողությունները:

- **«Արտաքին քոուչ»** – կազմակերպության աշխատակիցներին քոուչինգային ծառայություններ տրամադրելու նպատակով կազմակերպությունից դուրս վարձված քոուչ, որը չի հանդիսանում կազմակերպության լրիվ կամ կես դրույքով աշխատող:
- **«Խմբային քոուչինգ»** – նման նպատակներ և հետաքրքրություններ ունեցող անհատների խմբի քոուչինգ, որը ծառայում է յուրաքանչյուրի առաջխաղացմանը, և որում քոուչը և խմբի այլ անդամներն աջակցում ու ոգեշնչում են անհատական ունակությունների և ներուժի զարգացումը:
- **«ՔՄՖ գնահատող»** – որակավորված քոուչ, որը հաջողությամբ ավարտել է ՔՄՖ գնահատողի դասընթացը: ՔՄՖ գնահատողները ստուգում և գնահատում են ACC, PCC կամ MCC թեկնածուների քոուչինգային հանդիպումների ձայնագրությունները:
- **«ՔՄՖ-ի կողմից հավաստագրված»** – նշանակում է ՔՄՖ-ի կողմից որակավորում ստացած և կիրառվում է միայն նրանց համար, որոնք ունեն ՔՄՖ որակավորում, այսինքն՝ ACC, PCC կամ MCC:
- **«Ներքին քոուչ»** – կազմակերպության ներսում լրիվ կամ կես դրույքով աշխատող անձ, որը տվյալ կազմակերպության աշխատակիցներին տրամադրում է քոուչինգային ծառայություններ:
- **«Թիմային քոուչինգ»** – գործակցում թիմի հետ և թիմի դինամիկայի ու հարաբերությունների կատարելագործում ստեղծագործական ու ռեֆլեկտիվ գործընթացում, որը թիմի անդամներին ոգեշնչում է առավելագույնի հասցնել կարողությունները և ներուժը՝ իրենց ընդհանուր ու համատեղ նպատակներին հասնելու համար:

This translation of the ICF Code of Ethics was prepared by ICF Armenia and published on March 25, 2025. Official translations of this document are accessible from the ICF website at www.coachingfederation.org.